ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 49

«01» 06 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵՔԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արուսյակ Նորբերտի Աբաջյանին Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնից ազատելու և Նարինե Նորիկի Քոչարյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի համապատասխանաբար 06.03.2020թ. N 11/94-Ա և 22.05.2020թ. N 11/131-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ մասերով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Դադարեցնել Արուսյակ Աբաջյանի անդամությունը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու փորձագիտական հանձնաժողովի կազմում:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու փորձագիտական հանձնաժողովի անդամ նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ Նարինե Քոչարյանին:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության

արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար փորձագիտական հանձնաժողով ստեղծելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 28-ի N 62 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 71 հրամանի 1-ին կետում **«Աբաջյան Արուսյակ» բառերը փոխարինել «Քոչարյան Նարինե» բառերով:**

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ